# ՋԱՎԱԽՔԸ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

*Posted on May 10, 2023 by Keghart*




**Category:** Opinions

**Keghart.org**
Ստացուած՝ 8 Մայիս 2023-ին

**ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

**Դ Ի Մ Ո Ւ Մ**

Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունները դիմում են Ձեզ խնդրանքով՝ ուշադիր հետևել Վրաստանում ազգային փոքրամասնությամբ բնակեցված Ջավախքում քաղաքացիներին Վրաստանի քաղաքացիությունից զրկելու հաճախակի դարձած գործընթացներին՝ քաղաքական հիմքերով: Մասնավորապես,




Վրաստանի քաղաքացիությունից զրկվեց Տիգրան Մաթևոսյանը՝ Ախալքալաքի մունիցիպալիտետի Գումբուրդո գյուղից: Բանն այն է, որ նա «հանդգնել էր» ակտիվորեն (եռանդուն – **Գեղարդ**) մասնակցել իր գյուղի նշանավոր Սուրբ Համբարձում տաճարի հոգևոր սպասավոր պապի և քրոջ գերեզմանները պղծած վանդալների դեմ պայքարելու, նրանց մնացորդները վերահուղարկավորելու ու տաճարի գավթում խաչքար տեղադրելու սուրբ գործին:

Հակառակ Վրաստանի այն ժամանակվա ՆԳ նախարարի խոստմանը, սկսվեցին հետապնդումներ ակտիվ (եռանդուն – **Գեղարդ**) մարդկանց նկատմամբ և հատկապես Տիգրանի: Արդեն մի քանի տարի է ինչ այս գործը քննվում է տարբեր աստիճանի դատարաններում մարդու իրավունքների կոպիտ խախտումներով և ամենակարևորը՝ խախտվում է լուրջ առողջական խնդիրներ ունեցող Տիգրան Մաթևոսյանի ազատ տեղաշարժվելու և երկրից դուրս անհրաժեշտ բուժում ստանալու իրավունքը:

Հուսով ենք, որ Ձեր դրական արձագանքը էական ազդեցություն կունենա խնդրի

լուծման վրա:

**Ջավախքի մտավորականների միության նախագահ՝** Ա. Շիպակցյան
**«Ջավախք» հասարակական կազմակերպության նախագահ՝** Ս. Հակոբյան
**«Վիրք» կուսակցության համանախագահ՝** Դ. Ռստակյան



# There are no comments yet.